

Հրդեհների վիճակագրություն

2015թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ՏԿ և ԱԻՆ ՊՀ և ՏԱ տեսչությունում հաշվառվել է 751 հրդեհ՝ 222 864 913 դրամի նյութական վնասով, զոհվել է 20 և վնասվածքներ ստացել՝ 14 մարդ: 2014թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 740 հրդեհ՝ 369 407 136 դրամի նյութական վնասով, զոհվել էին 22 և վնասվածքներ ստացել՝ 29 մարդ: Այսպիսով, հրդեհների քանակն ավելացել է 11 դեպքով (1.48%), զոհերի թիվը նվազել է 2-ով (9.09%), վնասվածք ստացածներինը՝ 15-ով (51.72%), իսկ նյութական վնասի գումարը՝ 146 542 223 դրամով (39.67%):

Հրդեհների քանակն աճել է Երևան քաղաքում, Կոտայքի, Արարատի և Սյունիքի մարզերում, իսկ նվազել՝ մնացած բոլոր մարզերում: Հրդեհների 38.74%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 35.55%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 9.58%-ը՝ ավտոմեքենաներում, իսկ 16.13%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում: Հրդեհների 64.44%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 35.56%-ը՝ գյուղական բնակավայրերում:

Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 21-ը խոշոր են (նախորդ տարի՝ 20), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 124 171 024 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 55.71%-ն է: Առավել խոշոր հրդեհներն են՝

1) 02.01.15թ.՝ Տավուշի մարզ, գ.Աչաջուր, բնակելի տների տանիքներ (շուրջ 4717մ²): Նյութական վնասի գումարը կազմել է 23 305 200 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

01.01.15թ.՝ Գեղարքունիքի մարզ, գ.Ձորագյուղ, բնակելի տան տանիք: Նյութական վնասի գումարը կազմել է 4 755 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել երեխաների խաղալը կրակի հետ:

2) 22.02.15թ.՝ Արարատի մարզ, գ.Սայաթ-Նովա, <<Տոյոտա կորոլա>> մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասի գումարը կազմել է 11 580 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է:

3) 22.04.2015թ.՝ Շիրակի մարզ, ք.Գյումրի Վ.Սարգսյանի փողոց, տնակներ: Նյութական վնասի գումարը կազմել է 11 312 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

4) 04.02.15թ.՝ Լոռու մարզ, ք.Սպիտակ, բնակելի տուն: Նյութական վնասի գումարը կազմել է 10 միլիոն դրամ: Հրդեհի առաջացման պատճառը պարզաբանվում է:

5) 21.04.2015թ.՝ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Մեքենաշինական 14/1, տաղավար-խանութ: Նյութական վնասի գումարը կազմել է 9 820 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

6) 08.05.2015թ.՝ ք.Երևան, Ավանեսովի 6 շենք, 44 բնակարանի հյուրասենյակ: Նյութական վնասի գումարը կազմել է 5 100 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

7) 21.02.15թ.՝ Սյունիքի մարզ, ք. Կապան, <<Մերսեդես>> մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասի գումարը կազմել է 5 միլիոն դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

8) 20.06.2015թ.՝ Արարատի մարզ, գ.Շահումյան, բնակելի տուն: Նյութական վնասի գումարը կազմել է 5 միլիոն դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել էլեկտրական հաղորդալարերի կարճ միացումը:

9) 01.01.2015թ.՝ Գեղարքունիքի մարզ, գ.Ձորագյուղ, տան տանիք: Նյութական վնասի գումարը կազմել է 4 755 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել երեխաների խաղը կրակի հետ:

10) 24.02.15թ.՝ ք.Երևան, Նորագավիթի 2-րդ փողոց, մեղվանոց: Նյութական վնասի գումարը կազմել է 4 միլիոն դրամ: Հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել բաց կրակը:

Ձոհերով հրդեհների առաջացման պատճառներն են անզգուշությունը ծխելուց, բաց կրակը, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, ճանապարհատրանսպորտային պատահարը և ինքնահրկիզումը: Ձոհերի (որոնցից 5-ը տարեցներ են) գերակշիռ մասը՝ 8-ը, արձանագրվել է բնակելի հատվածում, 7-ը՝ ավտոմեքենաներում: Ձոհերն արձանագրվել են հետևյալ տարածաշրջաններում. Լոռի՝ 7, Սյունիք և Շիրակ՝ երեքական, ք.Երևան և Արագածոտն՝ երկուական, Արարատ, Արմավիր և Գեղարքունիք՝ մեկական:

5-ական մարդ վնասվածքներ են ստացել բնակելի հատվածում և ավտոմեքենաներում, 2-ը՝ ԱԳԼՃԿ-ներում, մեկական՝ բաց տարածքում և ԲԼԿ-ում: Վնասվածքները գրանցվել են Լոռիում՝ 5, ք.Երևանում, Գեղարքունիքում և Արմավիրում՝ երկուական, Վայոց ձորում, Սյունիքում և Արագածոտնում՝ մեկական:

Դատաքննչական մարմիններ է ուղարկվել հրդեհի 64 նյութ, որոնցով քրեական գործեր են հարուցվել 15 դեպքում: Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին 314 որոշումներ, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանի դատախազությունների կողմից: